Հավելված 1՝

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի**
**Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի**
**սեպտեմբերի 12-ի թիվ 190-Ա որոշման**

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման և Կումայրի պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի գոտևորման նախագծի մշակման

| | |
|---|---|
| բնակչության թիվը՝ մարդ | 118 600 |
| համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը, հա՝ | 4450 հա |
| հողային ֆոնդի փաստացի բաշխումը, այդ թվում, հողեր՝ | |
| բնակավայրի՝ | 2711,64 հա |
| գյուղատնտեսական նշանակության՝ | 413,58 հա |
| արդյունաբերության և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ | 367,11 հա |
| էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ | 423,12 հա |
| հատուկ պահպանվող տարածքներ՝ (այդ թվում՝ պատմական և մշակույթի) | 94,11 հա |
| հատուկ նշանակության հողեր՝ | 256,39 հա |
| անտառային հողեր՝ | 150,84 հա |
| ջրային հողեր՝ | 12.72 հա |
| պահուստային հողեր՝ | 20,49 հա |

(Հողային ֆոնդի առկայության և բաշխման 2023 թ. հաշվետվության ձև N 22 պատճենը կցվում է):

**2. Ռեսուրսների հիմնական տեսակները, արտադրության գերիշխող ճյուղերը, ինժեներատրանսպորտային ապահովվածությունը.**

- ✓ արտոններ - ...., վարելահող, խմելու ջրաղբյուրներ, պատմության և մշակույթի հուշարձաններ
- ✓ արտադրական ձեռնարկություններ
- ✓ ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում

**3. Բնակավայրի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները.**

- ✓ Գյուղ. արտադրություն, արդյունաբրություն, զբոսաշրջային և հանգստի զարգացում:

*<u>բնակավայրի զարգացման ծրագրից բխող՝ սոցիալական, մշակութային, արդյունաբերական, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի կատարելագործմանը ներկայացվող հիմնական պահանջները</u>*

**4. Նախագծման հիմքը.    կապալի պայմանագիր:**

**5. Բնակավայրի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները.**

**6. Քաղաքաշինական (այդ թվում հատուկ կարգավորման օբյեկտների) գյուղատնտեսական, բնապահպանական, պատմամշակութային, ինչպես նաև բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերվող հիմնական պահանջները.**

- ✓ Հայաստանի Հանրապետության կառավարության 26 հունիսի 2009 թվականի N 728-Ն որոշումը Գյումրու, Վանաձորի, Դիլիջանի, Ջերմուկի, Վաղարշապատի, Աշտարակի, Գորիսի, Վայքի, Տաթևի համայնքներում (բնակավայրերում) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին:

- ✓ կատարել տարածքի ուսումնասիրություն և վերլուծություն, բացահայտել սահմանափակումները և նախատեսել համապատասխան պահպանման միջոցառումներ:
- ✓ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004 թ. սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 1270 որոշումը, «Գլխավոր հատակագծում նախատեսել բնակավայրի տարածքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիների համակարգը (հուշարձանի պահպանության գոտի, կառուցապատման կարգավորման գոտի, լանդշաֆտի պահպանման գոտի) և օգտագործման պայմանակարգը (ռեժիմ)»:

**7. Տեղեկատվություն համայնքում առկա ելակետային տվյալների վերաբերյալ (առկայության դեպքում).**

- ✓ օգտագործել հնարավոր արդիական տվյալներ, կամ կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ

**8. Բնակավայրի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ.**

- ✓ Քաղաքի պատմական միջուկի սահմաններում պատմական ժառանգության պահպանության և հարմարվողական վերաօգտագործման մեթոդաբանության առաջադրում՝ իրականացման կարգավորման գործողությունների առաջադրմամբ:

**9. Բնակավայրի գոտևորման նախագծին և հողերի գոտևորման և օգտագործման սխեմային ներկայացվող պահանջները.**

- ✓ համապատասխան գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և կից ներկայացվող Հավելված 1-ի պահանջների:

**10. Նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող հիմնական պահանջները**

- ✓ համապատասխան ՀՀ կառավարության 29.12.2011 թ. N 1920-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 14.05.2001թ. N 408 որոշումներով սահմանված կարգերի պահանջների